

Մանկապարտեզի աշխատանքները սկսվել են 2018 թ-ի մարտի 1-ից : Գործել է 4 տարիքային խումբ /ավագ , միջին, կրտսեր 2-րդ , կրտսեր 1-ին/, ցուցակային ունեցել ենք 176 երեխա :

Առաջնորդվելով ուսումնական տարվա առաջնահերթ խնդիրներով շարունակվել են աշխատանքները բարձր մակարդակով իրականացվել:

- Մանկավարժական խորհրդի նիստի անցկացում :

- Մեթոդամի , սեմինար - պրակտիկումների անցկացում դաստիարակների հետ ամիսը 1 անգամ:

- Ընդհանուր ծնողական ժողովի անցկացում`

1. Տնօրենի տարեկան հաշվետվությունը ողջ տարվա ընթացքում կատարված աշխատանքների մասին:

2. Մեթոդիստի` ուսումնական գծով տնօրենի տեղակալի հաշվետվությունը ուսումնադաստիարակչական աշխատանքների վերաբերյալ :

3. Ընթացիկ հարցեր :

- Իրականացվել են նաև օպերատիվ , հանրագումարային և թեմատիկ ստուգումներ ,որի նպատակն էր ստուգել դաստիարակների կատարված աշխատանքները , նրանում կիրառված մեթոդների , սկզբունքների , հնարների ամբողջությունը երեխաների ուսուցման , դաստիարակության և զարգացման գործում :

- Իրականացվել են միջոցառումներ տարբեր տարիքային խմբերում <<Գարունը մեր մանկապարտեզում >> , <<Իմ մայրիկը ամենալավն է>> , <<Սուրբ Զատիկ>> , <<Բանակը մեր ուժն է>> , <<Հրաժեշտ մանկապարտեզին >> , <<Գիտելիքի օր>> , <<Ձեզ տեսնենք մայրիկներ >> , <<Լավագույն նախադպրոցական հիմնարկ >> , <<Մեր շնորհաշատ մայրիկները >> , <<40-ամյակի հորեյանական երեկո >> , <<Աշնան գույներ >> , <<Ծիածան >> , <<Բերքառատ աշուն >> և <<Հրաշագործ ձմեռը >> թեմայով հեքիաթային բեմականացում , որտեղ մեզ հյուր էր եկել Ձմեռ պապն ու Չյունանուշը քաղաքապետարանի կողմից տրամադրված անակնկալ նվերներով :

- Հունիսի 1-ին` երեխաների պաշտպանության օրը անցկացվեց սպորտլանդիա մայրիկների մասնակցությամբ , որտեղ թիմերը ավագանիներ` Էդիկ Աբրահամյանի և Արման Վարդանյանի կողմից պարզևատրվեցին նվերներով :

- Նոյեմբերին մանկապարտեզում անցկացվեց << Մեր շնորհաշատ մայրիկները >> թեմայով միջոցառում , որտեղ թիմերը ստացան փոքրիկ նվերներ /հաշվողական քարտեր / տնօրենի կողմից :

- Անցկացվել են բաց պարապմունքներ` ավագ , միջին և կրտսեր 2-րդ խմբերում տարբեր առարկաներից:

-Միստենատիկաբար իրականացվել են էքսկուրսիաներ բնության գրկում և այլ վայրերում ,որի փոխադրամիջոցի տրամադրումը քաղաքապետարանի կողմից դարձել է ավանդույթ:

-Մշակույթի տանը անցկացվել է մանկապարտեզի հիմնադրման 40 –ամյակին նվիրված հորեյանական երեկո, որի անցկացման համար քաղաքապետարանը մեզ տրամադրել էր 150.000 դրամ :

-Ավագանու անդամ ` Լաերտ Մանուկյանի կողմից մանկապարտեզը ` որպես նվիրատվություն ստացավ 13 մանկական աթոռ :

-Օգոստոսի 31-ին բարերար Բաղայանների ընտանիքի կողմից մանկապարտեզը գույքի տեսքով ստացավ նվիրատվություն .

մահճակալներ -10 հատ

սեղան -3 հատ

անկողնային հավաքածու - 11 հատ

սպիտակեղենի հավաքածու - 17 հատ

-<< Սոցիալական աշխատանք ընտանիքների հետ >>ծրագրի շրջանակներում մանկապարտեզին տրամադրվեց .

մանկական ծածկոց – 33 հատ

մանկական սպասք /տակդիրով/ -7 հատ

-Մանկապարտեզում երեխաների թվի կտրուկ ավելանալու պատճառով համայնքի ավագանու 13.09.18թ թիվ 39 որոշմամբ մեր մանկապարտեզում բացվեց 5 –րդ խումբ :

-Արտյոմ Ջրաղացպանյանի կողմից մանկապարտեզին տրված գումարային նվիրատվությունից նոր բացված խմբասենյակի համար ձեռք բերվեց ուսուցողական պատտառներ , քարտեր և խաղալիքներ ` խաղային կենտրոնների և սարքեր ` դահլիճի լուսավորությունը կարգավորելու համար :

- Մանկավարժի օրվա կապակցությամբ քաղաքապետ ` Վ. Բարսեղյանը շնորհավորեց և նվերներ հանձնեց ողջ մանկավարժական անձնակազմին ,իսկ <<Լավագույն մանկավարժ >> պատվոգրին արժանացրեց մեթոդիստ ` Աննա Սարգսյանին :

-Քաղաքապետարանի կողմից տրամադրվեց ապակիներ ` մանկապարտեզի խմբասենյակների պատուհանների վնասված մասերը վերանորոգելու համար :

-Հոկտեմբերի 31-ին քաղաքապետարանը մեզ տրամադրեց նոր վառարաններ /450.000 դրամ արժողությամբ /,քանի որ մեր հին վառարանները այլևս շահագործման պիտանի չէին :

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

01.01.2018թ-21.12.2018թ

/Վեդի քաղաքի թիվ3 մանկապարտեզ/ՀՈԱԿ-ի
 ֆինանսավորումը իրականացվում է Վեդու քաղաքային
 համայնքի բյուջեից :

| | |
|---|---------------------------------------|
| 2018թ.մ/գ-ի ընդհանուր բյուջեն կազմում է | 23.500.0 դրամ |
| 1 երեխայի հաշվով ծախսը կազմում է | 23.0դրամ |
| Քաղաքապետարանը | 18.000.0դրամ |
| Ծնողական միջոցներ | 5.0դրամ |
| 21. 12.2018թ. դրությամբ ֆինանսավորումը կազմել է | 24.830.000դրամ |
| Ծնողական միջոցներ | 6.023.6դրամ |
| Աշխատավարձ | 17.547.4դրամ |
| Տնտեսական | 246.9դրամ |
| Սննդամթերք | 5.533.0դրամ, որից պարտք՝ 162.7դրամ |
| Էլեկտրոններգիա | 149.9դրամ |
| Կապ | 116.4դրամ |
| Գազ | 321.8դրամ |
| Գազի սպասարկում | 65.4դրամ |
| Ջուր | 133.2դրամ |
| Ադր | 40.000դրամ |
| Անվճար երեխաների թիվը | 9 երեխա |
| Ցուցակային | 194 երեխա |
| 2013թ ծնված երեխաների թիվը | 52 երեխա |

<<ՎԵՂՈՒ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀՈԱԿ-ում

01.01.2018թ _ 21.12.2018թ ԿԱՏԱՐՎԱԾ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Զեկուցող՝ <<Վեղու թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Ա. Բարսեղյան